



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 օգոստոսի 2023 թվականի N 293 -Ա

**«ԿԱՊԱՆԻ Ա. ՇԻՐՎԱՆՉԱԴԵԻ ԱՆՎԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ
ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՏԻԳՐԱՆ ԱԹԱՅԱՆԻՆ
ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ ԱՆՆԱ ԹԱՄՐԱԶՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 163-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով «Կապանի Ա. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Տ. Աթայանի դիմումը՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. «Կապանի Ա. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Տիգրան Աթայանին 2023 թվականի օգոստոսի 14-ից 25-ը ներառյալ տրամադրել 2022-2023 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մի մասը՝ 10 աշխատանքային օր:

2. Արձակուրդի ընթացքում «Կապանի Ա. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության գլխավոր հաշվապահ Աննա Թամրազյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2023թ. օգոստոսի 8
ք. Կապան

